



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

1 ապրիլի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական  
անձանց միության անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությունը 09.03.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան խնդրելով՝ «Որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «որպես անհիմն հարստացում ենթակա չեն վերադարձման ի կատարումն գոյություն չունեցող պարտավորության տրված դրամական գումարները եւ այլ գույքը, եթե ձեռք բերողն ապացուցում է, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գիտեր պարտավորության բացակայության մասին» դրույթի՝ ՀՀ

Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 74-րդ եւ 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ վերոհիշյալ դրույթի կիրառումը հանգեցրել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության՝ ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների խախտման: Մասնավորապես, ինչպես գտնում է դիմողը, «Վիճարկվող դրույթի պայմաններում Բյուրոն զրկվում է իր գույքի (դրամական միջոցների) ճակատագիրն իր հայեցողությամբ որոշելու հնարավորությունից, Բյուրոյի՝ որպես սեփականատիրոջ, հայեցողությունը, կամաարտահայտությունը, ինքնավար կամք դրսևորելու իրավունքներն անտեսվում են, քանի որ չի վերադարձվում սեփականատիրոջ գույքը, որը սխալմամբ հայտնվել է այլ անձի մոտ»:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթով խախտվում է իրավական որոշակիության սկզբունքը, սահմանափակումը հնարավորություն չի ընձեռում դրսևորել համապատասխան վարքագիծ, քանի որ, ըստ դիմողի՝ հստակ չէ, թե այդ դրույթը երբ կարող է կիրառվել, իսկ երբ՝ ոչ:

3. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով, սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման:

Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ դիմողի կարծիքով՝ իր կողմից մատնանշված անբարենպաստ հետեւանքներն իր նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, եւ խնդրո առարկա իրավադրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել որպես սահմանադրաիրավական վեճ:

Ինչպես հետեւում է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՏԴ2-0119/02/14 քաղաքացիական գործով 2015 թվականի փետրվարի 13-ին կայացրած եւ հետագա բողոքարկման արդյունքում օրինական ուժի մեջ թողած վճռից՝ դատարանը

հաստատված է համարել այն հանգամանքը, որ «...հատուցում ստանալու մասին երրորդ անձի դիմումին կից Հայցվորին (այսինքն՝ սույն գործով դիմողին) է ներկայացվել ՀՀ ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության 2-րդ սպայական գումարտակի 4-րդ սպայական վաշտի հրամանատար, ոստիկանության փոխգնդապետ Ս. Վ. Հակոբյանի կողմից 03.12.2011թ. հաստատված եզրակացությունը, որում նշված է վնասը պատճառած տրանսպորտային միջոցի մակնիշը՝ գրեյդեր «ԴԶ-143», այսինքն՝ Հայցվորը տեղյակ է եղել, թե ինչ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման արդյունքում է պատճառվել վնասը...», այսինքն՝ «...Հայցվորն իմացել է պարտավորության բացակայության մասին, քանի որ «ԴԶ-143» մակնիշի գրեյդերն իր տեխնիկական բնութագրերով ենթակա չէ պարտադիր ապահովագրության այն պատճառով, որ դրա առավելագույն արագությունը չի գերազանցում 50 կմ/ժ»: Այս հանգամանքով է պայմանավորված դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի նորմի կիրառման իրավաչափության հարցը, որը, ինչպես հետևում է դիմողի փաստարկներից, ներկայացվում է որպես սահմանադրական վեճ:

Այսպիսով, դատաքննության շրջանակներում վերոհիշյալ փաստական հանգամանքի շուրջ է ձեւավորվել դատական ակտի նկատմամբ դիմող կողմի անհամաձայնությունը եւ այն որպես սահմանադրական վեճ ներկայացնելու մտադրությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձեւակա-նորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Հետեւաբար, այս առումով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերով, ինչպես նաեւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

## Ո Ր Ո Շ Ե Ց.

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

1 ապրիլի 2016 թվականի  
ՍԴԴԿՈ/2-11